# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

<<Ավիաուսումնական կենտրոն>> ՓԲԸ 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 208 հրամանով սահմանված գնահատող հանձնաժողովի նիստի

<<Ավիաուսումնական կենտրոն>> ՓԲԸ 28 դեկտեմբերի 2016
(ք. Երևան 0042, <<Զվարթնոց>> օդ-ն) ժամը 11:00

Հանձնաժողովի նախագահ՝
Ս. Զարգարյան <<Ավիաուսումնական կենտրոն>> ՓԲԸ թռ. ապահով. մասնագետ

Հանձնաժողովի անդամներ՝
Կ. Ազանեսյան <<Ավիաուսումնական կենտրոն>> ՓԲԸ գլխավոր հաշվապահ
Ն. Ղարիբյան <<Ավիաուսումնական կենտրոն>> ՓԲԸ մեթոդիստ
Հանձնաժողովի քարտուղար՝
Տ. Աբրահամյան Գնումներ համակարգող

***Օրակարգ՝***

<<Diamond 40-TDI>> կամ համարժեք սերիայի օդանավի վարձակալության ծառայության գնման նպատակով <<ԱՈՒԿ-ԲԸԾՁԲ-17/01>> ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բացում և գնահատում:

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակցի անվանումը և հասցեն՝

- <<Մեյն Ավիեյշն Տեքնիքս>> ՍՊԸ (հասցե՝ ք. Երևան, Ազատության 12/1-18):

Հանձնաժողովը որոշեց բացել ներկայացրած ծրարը:

Ուսումնասիրվեց <<Մեյն Ավիեյշն Տեքնիքս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը: Ծրարը կազմելու և ներկայացնելու տվյալների ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը արձանագրեց, որ այն կազմված և ներկայացված է համապատասխան սահմանված կարգին:

<<Մեյն Ավիեյշն Տեքնիքս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում առկա է սույն ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք համապատասխանում են սահմանված պահանջներին:

Հրապարակվեց <<Մեյն Ավիեյշն Տեքնիքս>> ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը՝ ներառյալ ԱԱՀ.

| հ/հ | Գնման առարկայի անվանում | Մասնակցի կողմից ներկայացված գնման առարկայի գինը 480 թռիչքաժամի համար, ներառյալ ԱԱՀ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | <<Diamond 40-TDI>> կամ համարժեք սերիայի օդանավի վարձակալություն | 123 638 400/ մեկ հարյուր քսաներեք միլիոն վեց հարյուր երեսունութ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ |

**Հանձնաժողովը միաձայն որոշեց՝**

1. <<ԱՈՒԿ-ԲԸԾՁԲ-17/01>> ծածկագրով գնման արդյունքում 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել <<Մեյն Ավիեյշն Տեքնիքս>> ՍՊԸ -ին:
2. Դիմել ֆինանսների նախարարություն ընտրված մասնակցի ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման համար:
3. ՖՆ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխան եզրակացություն ստանալուց հետո, պայմանագիր կնքելու նպատակով դիմել <<Մեյն Ավիեյշն Տեքնիքս>> ՍՊԸ -ին:
4. Օրենքով սահմանված կարգով սույն որոշման մասին տեղեկացնել շահագրգիռ անձանց:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Զարգարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Կ.Ազանեսյան

Ն. Ղարիբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Աբրահամյան